

XI-դասարան

1. Նար-Ռոսի ստեղծագործությունը գերել ու դաստիարակել է բազում սերունդների: Նրա նուրբ դիտողականությունը, սրատես աչքը, խուզարկու հայացքը թափանցում են մարդկային հոգու անթարգմանելի գաղտնարանները և պեղում ու գտնում այն, ինչ բոլորը խնամքով թաքցնում են: Լինելով իր սիրած գրողի՝ Չեխովի գրական տաղանդի երկրպագուն, նա էլ Չեխովի նման դառնում է «հոգու շերտերի փայտփորիկը»: Նար-Ռոսի լավագույն վիպակներից է «Մպանված աղավին»: Վերնագիրն արդեն հուշում է, որ մենք դառնալու ենք մի տխուր պատմության մասնակից: Վիպակի հերոսուհին՝ Սառան, հենց սպանված անմեղությունն է, ոտնահարված սիրո գոհը: Վիպակն ունի բավականին հետաքրքիր մուտք ու ողբերգական ավարտ: Հեղինակի՝ Մարգարյանի ընկերը՝ Գարեգին Միսակյանը, հայտնում է, որ նշանվել է և ցանկանում է ներկայացնել իր հարսնացուին, ում սիրահարվել էր միանգամից և անվերադարձ: Առաջին հանդիպումից զարմացած է ոչ միայն Մարգարյանը, այլև ընթերցողը: Մենք տեսնում ենք բարեկամ, գեղեցիկ, խոշոր աչքերով, փարթամ կրծքով տարօրինակ մի արարածի, որի պահվածքը առնվազն տարօրինակ է: Նա պինդ-պինդ սեղմում է այցելուի ձեռքը, անթթիթ նայում դեմքին ու «հիպնոսահարում» լռությամբ: Սառան ծանր մանկություն է ունեցել, զրկվել է ծնողներից, և հոր ընկերը իր խնամքի տակ է վերցրել նրան: Սակայն նրանք չեն սիրել միմյանց, չեն մտերմացել: Նա հասակ է առել մենակյացին բաժին ընկած պայմաններում. չունի մտերիմ, չունի հոգեկից, և հանկարծ հանդիպում է մեկին, ով համարձակ է, ուժեղ, համակրելի, գրեթե նման գրքերում կարդացած իր հերոսներին: Նրանք սիրահարվում են. ամեն ինչ գեղեցիկ է, հանդիպումները՝ սպասված, իրար հետ անցկացրած ժամանակը՝ երջանիկ: Բայց հենց այդ ժամանակ էլ նշմարվում են Սառայի հոգեկան տարուբերումները, նա սարսափում է՝ տեսնելով արնաթաթախ սպանված աղավին, դողում է ամբողջ մարմնով: Մի քիչ անհամոզիչ է, որովհետև նա ոչ մի հիմք չունի իրեն համեմատելու աղավնու հետ. հաղթանակել էր սերը: Բայց վերջանում է արձակուրդը, և սիրելին՝ Ռուբեն Թուսյանը՝ իրավաբանականի շփացած ուսանողը, վերադառնում է Պետերբուրգ: Սառան արդեն կին է, սպասում է երեխայի, բայց նամակները սկսում են կամաց-կամաց սակավանալ՝ ի վերջո դադարելով: Սառան միայնակ է, խաբված, լքված, ատելությամբ լցված աշխարհի ու մարդկանց հանդեպ: Եվ նա կատարում է սարսափելի հանցագործություն. սպանում է նորածին երեխային ու պարփակվում ինքն իր մեջ՝ սնուցելով վրեժի գաղափարը: Վրեժխնդրությամբ լցված՝ Մեդեան՝ հին հույների դիցաբանական հերոսուհին, նույնպես սպանում է իր երկու որդիներին՝ պատժելու անհավա

տարիմ Յասունին՝ արգոնավորդների առաջնորդին, որ կախարդուհի Մեդեայի օգնությամբ գողացավ Ոսկե գեղմը: Գուցե Մեդեայի դեպքում այս հանցանքը փոքր-ինչ մեղմանա, եթե հաշվի առնենք ամեն ինչ կորցրած կնոջ վրեժխնդիր աստելությունը: Գուցե...բայց Սառան անսահման սիրել է Թուսյանին, սիրել է՝ ոչինչ չպահանջելով, ոչինչ չակնկալելով, քանզի չի մտածել, որ երբևէ կարող է խաբվել: Բայց խաբվել է... Սառան վիշտ ունի, նրան դժբախտացրել են, բայց մի թե՛ խորունկ վիշտը մարդուն վայրենացնում է, կոպտացնում, ո՞ր տառապանքը կարող է կնոջը զրկել քնքշությունից, կանացիությունից, ներելու կարողությունից: Իսկ սիրո վիշտը երևի կնոջը ավելի դյուրազգաց ու աստվածային է դարձ-

նում: Բայց Սառան դարձել է դյուրաբորբոք, կոպիտ, անտանելի ու չար հոգի. Նա չի պահպանում անգամ քաղաքավարության տարրական կանոնները: Նա համատ է, քմահաճ ու հպարտ, և այդ հարաբերություններից տուժում են և՛ օտարները, և՛ հարազատները: Գեղեցիկ, երազային սիրուց անգամ որևէ ջերմացնող հուշ չի մնացել, համակ եսապաշտություն, չարություն, վրեժխնդրություն: Դժվար է հավատալ, որ նրա ընթերցասիրությունը նրան խելք ու խոհականություն է տվել. Նրա արարքները ոչ մի արդարացում չունեն. Մեկ անգամ միայն հնազանդվեց ծնողների կամքին՝ ընդունելով նրանց «գտած» փեսացուին, նա էլ, հանգամանքների բերումով, դարձավ միայն վրեժի գործիչ:

Մի պահ նա կարողանում է սկսել նոր կյանք, պատրաստվում է նորից մայրանալու, բայց հայտնվում է Թուսյանը, և նա կորցնում է հավասարակշռությունը. դառնում է մարմնացյալ վրեժ: Փոխանակ օգտվելու իր նոր վիճակից, երջանկանալու իր մոտեցող մայրությամբ, նրա մեջ արթնանում է նույն մոլագարը: Երբ կամագուրկ Միսակյանը, որն, ի դեպ, նույնպես ծանր մանկություն է ունեցել, չի կարողանում սպանել Թուսյանին, նա ինքն է գնում սպանելու:

Անսահման սիրուց ծնված ատելությունը ավերում է նրա կանացի հոգին, հաղթում է մայրական բնագրին, ոչնչացնում է ամեն գեղեցիկը ու տանում կործանման: Մերժված կնոջ կերպարը կարծես չի տեղավորվում Սառայի կերպարում, և Նար-Դոսը վիպակը վերջացնում է Սառային «բժշկական մատենագրության» ուսումնասիրության նյութ դարձնելով: Բայց Սառան ծանր մանկության հետևանք է, սիրո ու գուրգուրանքի, մտերիմ խոսքի կարոտ մեկը. «կենտրոնացած հայացքի մեջ մի ինչ-որ խորը, անթափանցելի թախիժ էր նշմարվում, որը տրագիկական կերպարանք էր տալիս նրա դեմքի զարմանալի խիստ-կանոնավոր գծերին»: Այս վիպակը հաճախ են համեմատել Չեխովի «Ճայր» վիպակի հետ, բայց սրանց տարբերությունները խիստ ակնհայտ են: Այս վիպակում գրողը ներկայացրել է սիրո ստեղծարար ուժը, միաժամանակ տալով աստելության այն դեղատոմսը, որը սնվում է հավատի, մաքրության ու վստահության կորստի հունդերով:

Ֆրանսիացի գրող Մենթ Էքզյուպերին ասել է. «Մենք բոլորս գալիս ենք մանկությունից», և սա բացարձակ ճշմարտություն է. անուրախ ու անժպիտ մանկությունը մարդու մշտական ուղեկիցն է, չարության սնուցիչը, կյանքն ավերելու մեծագույն կովանը: Այսպես է նաև Սառայի դեպքում:

2. Հայ գրականության անհաս Արարատը ամեն տարիքի , ամեն տրամադրության , ամեն խոհի բանաստեղծն է: Հնուտ, հանճարեղ լոռեցու անգուգական ստեղծագործությունը մեր ուսուցիչն է ողջ կյանքում:

Բյուրեղյա մաքրությամբ ներծծված նրա գեղեցիկ հեքիաթներն ու պատմվածքները մեզ տանում են յուրօրինակ մի աշխարհ, որը մեր հոգին լցնում է սիրով, ջերմությամբ, կարեկցանքով, դաստիարակում մարդասիրությամբ, բարությամբ, սիրով:

Թումանյանի արձակը մեզ տանում է ժողովրդական մտածողության խորքերը, բացահայտում վեհն ու գեղեցիկը, դասապարտում տգեղն ու չարությունը:

Նրա պատմվածքներից է անգուգական «Գիքորը»՝ սպանված մանկության հավաքական կերպարը՝ միամիտ, անկեղծ, տարված իր հայրենի եզերքի հեքիաթներով, որ գոհ է դառնում գյուղացու ծանր կյանքը, դառնությունը, մերկությունը թեթևացնելու ազնիվ գաղափարին: Ամենագոր քաղաքը, նոր զարգացող բուրժուական վերնախավը, փողի մոլուցքը կուրացրել են բազազներին, փողատերերին. Նրանք հարստահարում են՝ օգտվելով սոցիալական ծանր վիճակից, տգիտությունից, հույսի ու հավատի «մեղքից» : 12 տարեկան գյուղացի Գիքորը հայտնվում է մեծ քաղաքում՝ Թիֆլիսում: Նա անվարձ ծառա է բազազ Արտեմի տանը. Տունն է մաքրում, խանութ հաց տանում, մուշտարի կանչում՝ հոգում փայփայելով իր հայրենի եզերքի կարոտը, հիշողությունը: Սրտաճմլիկ մի տեսարան է բացվում ընթերցողի առաջ, երբ կարդում ենք գյուղացի Համբոյի նամակը՝ որդուն՝ ներծծված անսահման սիրով, հույսով, կարիքի ու սովի անելանիության ցավով:

Մեռնում է Գիքորը՝ ընդհանրացնելով իր նմանների ճակատագիրը, միաժամանակ մնալով եզակի: Միլվա Կապուտիկյանը հրաշալի բանաստեղծություն է նվիրել Գիքորին՝ արտահայտելով բոլորիս զգացմունքները «Փոքրի՛կ Գիքոր, առաջին իմ վիշտն ես դարձել...»

Հրաշալի է «Իմ ընկեր Նեսուն»: Նեսուն՝ գեղջուկ տղաների մեջ ամենաշնորհալին, ամենալավը, ամենաշատ հեքիաթ իմացողը, դառնում է գող ու անազնիվ, հակակրեղի մի անձնավորություն, որովհետև անհամար զրկանքները նրան քաշել են կյանքի հատակը: Բնության ու մարդու անխզե

լի կապն են արտահայտում «Գելը», «Եղջերուն», «Երկաթուղու շինարարությունը» հրաշալի պատմվածքները:

Անգուգական են Թումանյանի արձակի հարատև գանձերը՝ հեքիաթները . «Կոնաստ աղջիկը», «Խոսող ձուկը», «Անխելք մարդը», «Պոչատ աղվեսը», «Քեֆ անողին քեֆ չի պակսիլ», «Անբան Հուռին», «Բարեկենդանը» և վերջապես հանճարեղ «Քաջ Նազարը», որը ժողովրդական «Դժիկոն» հեքիաթի հրաշակերտ մշակումն է: Աշխարհի բոլոր ժողովուրդները ունեն նման բովանդակության հեքիաթ, բայց Թումանյանի «Քաջ Նազարը» գերազանցում է բոլորին: Այս հեքիաթը մշակել են Իսահակյանը՝ «Աղա Նազարը», Համաստեղը՝ «Քաջ Նազար», Դերենիկ Դեմիրճյանը՝ «Քաջ Նազար»:

Բայց ժողովուրդը հատկապես սիրեց Թումանյանի մշակումը, որովհետև այնտեղ տեսավ ապրելու իր անբեկանելի կամքը, տեսավ ծաղրով ու ծիծաղով կյանքին հաղթելու մեծ արվեստ:

Վախկոտ, ծուլ, անբան մեկը՝ Նազարը, մեկ տասնյակ ճանճ սպանելով է սկսում իր ողիսականը . մի փալասի վրա տերտերի կատակով գրած երկտողը դառնում է նրա ճանաչման լավագույն առհավատյան .

Անհաղթ հերոս քաջն Նազար,

Որ մին գարկի՝ ջարդի հազար:

Այս «կախարդական թալիսմանը» դառնում է Նազարի ճանաչման բանալին: Նրա հետ կատարված բոլոր «հերոսական» անցքերը վախից են, բայց միամիտ ու տգետ ժողովրդի կողմից ընկալվում են որպես անօրինակ քաջություն՝ սարսափած գյուղացու ծիուն տիրանալուց մինչև թագավոր դառնալը:

Բախտի բերամբ դառնում է թագավոր՝ ինքն էլ զարմանալով ու հավատալով, թե իրոք արժանի է թագավոր լինելու և «մինչև օրս քեֆ է անում ու ծիծաղում աշխարհի վրա...բախտ ունես քեֆ արա, ի՛նչ քաջություն, հանճար . դատարկ բաներ են բոլորը: Բանը մարդու բախտն է: Բախտ ունես՝ քեֆ արա» :

Դեմիրճյանական մշակումը բոլորովին տարբեր է . Դեմիրճյանը ներկայացրել է սարսափելի մարդու կերպարը՝ «աշխարհը բռիս մեջն է» և «ես հերիք եմ»

նշանաբաններով : Սա վկայում է Դեմիրճյանի «երբ գրում էի Քաջ Նազարը, ես դեռ շարունակում էի մարդու լուսաբանությունը»: Այդ իսկ պատճառով Դեմիրճյանը Քաջ Նազարին գահընկեց է անում՝ տուրք տալով նաև ժամանակի պահանջին, մինչդեռ Թումանյանը ու Իսահակյանը համոզված են, որ քաջնազարականության թեման հավերժ է այնպես, ինչպես աշխարհը:

Թումանյանի հեքիաթների հերոսները դարձել են հավաքական անուններ՝ բնորոշելով մարդկային այս կամ այն հատկությունները: Փանոս, Հուռի, Հասան, սուտլիկ որսկան, Սիմոն և այլն:

3. Չարենցի դիպուկ բնորոշմամբ՝ հայ գրականության Վարպետը անցել է մեծ կյանք՝ սկսած ճոխ ու շոայլ մանկությունից մինչև իմաստուն ծերություն: «Բանաստեղծին ճանաչելու համար պետք է լինել նրա հայրենի երկրում», -ասել է գերմանացի մեծ հանճարը՝ Գյոթեն:

Վարպետին էլ ճանաչելու համար պետք է լինել Շիրակի չքնաղ դաշտե բում, Ալագյազի՝ դեպի հեռուն թոցնող մրմունջը լսել, Ախուրյանի ափին ծվարած ջրաղացի երգը լսել, «չքնաղ Զարոյի» հետ թափառել սիրո անխմանալի կաճաններում, Շուշանի հետ լինել Արագի ափին «սալվի ու ուռ տնկել», «ծով քրտինք թափել» ու «գետակի վրա կախված» ուռենուն վատահել երագ, սեր ու տառապանք:

«Նվիրական վայրեր, ուր անցան իմ մանկության ու պատանեկության առաջին տարիները, ուր խաղացի ընկերներիս հետ.

Փառք ու հանճար չարժեն խաղին

Մի ծաղկաբույր տղայի», - անհուն կարոտով խոստովանել է, Իսահակյանը: Այնքա՛ն անմիջական է Իսահակյանի քնարերգությունը, այնքա՛ն իմաստնացած ժողովրդական մտածողությամբ, որ հաճախ նրա երգերը շփոթել են ժողովրդական երգերի հետ՝ «Դարդս լացեք», «Որսկան ախպեր», «Միրեցի յարս տարան», «Մն- մութ ամպեր» և այլ բազմաթիվ գոհարներ, որոնք երգվում են ու մորմոքում մարդու հոգին, գրված են պարզ, գեղջուկ բարբառով, գեղջկական մտածողությամբ, իրենց խորքում ունեն դեպի նախահիմքերը իջնող խոր փիլիսոփայություն. Հենց այս է նկատի ունեցել Չարենցը, երբ գրել է.

Արդեն ցնորք է անհնար.

Ունենալ երգ այդքան նայիվ,

Որ հմայե երեխային

Եվ ծերունու սրտում մնա:

Չարենցը նաև խոստովանում է, որ ինքն էլ կուզենար ունենալ

« երգ այդքան նայիվ,

Որ գրեի խուղիս որմին և

Նա հավետ այնտեղ մնար»

Եվ այնքան էր լցված Վարպետի «Նայիվ» փիլիսոփայությամբ, որ անգամ իր երգը ունենալու դեպքում այն նվիրելու էր բանաստեղծին: Այո՛, Ալազյազին, Մանթաշին, Չարոյին, մաճկալին նվիրված երգերը մեծար-

ժեք են հենց նրանով, որ կրում են անուրանալի տաղանդի կնիքը և սիրելի են աշխարհի բոլոր հորիզոնականներում ապրող մարդուն:

«Երգեր ու վերքեր» հրաշքի հրատարակությունից հետո Իսահակյանն այլևս ճանաչված բանաստեղծ էր . նրա քնաներգության մեջ առկա էին սերը, մայրը, հիացումն ու մերժումը, հայրենիքը, ազատությունը, և մարդկությանը հուզող բոլոր թեմաները:

Իսահակյանի քնարերգության գլուխգործոցը «Աբու – Լալա Մահարի» քնարական պոեմն է, որտեղ աշխարհից, մարդուց, մարդկային հարաբերություններից հիասթափված հեռուը հեռանում է բոլորից և գնում դեպի անհայտը, դեպի Արևը՝ հաստատելով իր խոր սերը իր իսկ մերժած ամեն ինչի նկատմամբ:

Պոեմը գրվել է 1909-ին, սակայն նրա արմատները շատ ավելի խորքերում են թաքնված: Դեռ 1901-ին հոգնած ու տառապած բանաստեղծը երագում էր անապատի հավերժության անուրջը «Ե՛վ անապատում», «Օտա՛ր, ամայի՛ ճամփեքի վրա » (1903), բայց պոեմի ստեղծման համար կար նաև ավելի գորեղ կռվան, ռեակցիայի տարիներին հետապնդվում էին հայ ազատամիտ գործիչները՝ այդ թվում նաև Իսահակյանը, որ ամեն ամիս պետք է Ալեքսանդրապոլից գար Երևան՝ ստորագրությամբ հաստատելու իր ներկայությունը: Հերթական անգամ, վիրավորված, մերժված, Մետեխի բանտից նոր դուրս եկած բանաստեղծը գալիս է Երևան՝ ներկայանալու ցարական ժանդարմերիային և հետդարձի ճանապարհին գնացքի պատու

հանից տեսնում է ուղտերի քարավանը, և նրա զանգերի դողանջը, գնացքի անիվների չիկչիկոցը հանիրավի ամբաստանված բանաստեղծի մեջ ծնում են շիկացած մտքեր՝

հեռանալ, գնալ դեպի անապատ, դեպի «լույս հեռու»: Իհարկե, միայն անձնական չէին բանաստեղծի ցավերը, 1909-ին Ադանայում սրի էր քաշվել 30000 հայ, հայրենիքը գտնվում էր արյան ու կե-

դեքման մեջ, չորս կողմից սեղմվում էր օդակը հայ ժողովրդի ու Հայաստանի շուրջ. ի՞նչ էր մնում այդ ժողովրդի զավակին, եթե ոչ մերժել ու անիծել «օրենքները լուծ», «կեղծիք ու նախճիր», «բռնություն ու բռնադատում»:

Եվ բանաստեղծը փրկություն է որոնում «գերմարդկության» գրկում: Արևելքի ու Արևմուտքի պոետական ու փիլիսոփայական մշակույթներն ամբարած բանաստեղծը չէր կարող չժխտել աշխարհի բարոյական հիմքերը, այրող ատելություն չունենալ այս աշխարհի դրվածքի հանդեպ:

Պոեմի հոռետեսական տրամադրության ակունքը նախ և առաջ պետք է որոնել բանաստեղծի և իր ժողովրդի ողբերգական վիճակի մեջ: Պոեմի վրա օտար ազդեցությունները զգալի են, և դա անժխտելի է:

Ձևի իմաստով՝ արևելյան պոեզիան, փիլիսոփայական իմաստավորմամբ՝ Ֆրիդրիխ Նիցշեն, ում փիլիսոփայությունը լավագույնս յուրացրել էր բանաստեղծը:

Պոեմի նախերգանքում Իսահակյանը անդրադառնում է 11-րդ դարի արաբ բանաստեղծ, փիլիսոփա Աբու ալ-Աշա ալ Մաարիին, որը, ըստ ավանդության, ապրել է մարդկանցից դժգոհ, սիրել է մենակյաց ազատույթ

յունը: Նա պատվիրել է իր շիրիմին գրել «Իմ հայրը իմ դեմ մեղանչեց, բայց չմեղանչեցի ես ոչ ոքի դեմ», որն էլ բառացի մեջբերել է բանաստեղծը՝ գրելով չակերտներում:

Իսահակյանը հեռացել է նրա կենսագրությունից, ավելի՛ դիմել է նրան, քանի որ նմանության եզրեր կան նրանց ընկալումների մեջ՝ ատելություն աշխարհի անարդար դրվածքի, մարդկային արատների, կա հոռետեսական աշխարհայացք, բայց պոեմի հերոսը ոչ թե արաբ բանաստեղծն է, այլ Իսահակյանն ինքը՝ պայմանաբար անձնավորված արաբ բանաստեղծի կերպարում:

Իսկ բովանդակության առումով առկա է Նիցշեի փիլիսոփայությունը. այդ բազմադեմ մտածողը ուներ «գերմարդու» պաշտամունք, այն ընտրյալ անհատի, որ արհամարհանքով է նայում ժողովրդական զանգվածներին:

Իսահակյանին հրապուրել է Նիցշեի քննադատական վերաբերմունքը բնակալության, բարոյախոսական կեղծիքի դեմ: Նիցշեի ազդեցությունը այստեղ երևում է իբրև աշխարհակարգի, կեղծ ու պատիր բարոյական չափանիշների, հակամարդկային կարգերի, օրենքի ուժով սրբագործված բռնության, մարդուն ստորացնող ու ոչնչացնող ամեն ինչի դեմ:

Դեռևս XVI դարում մեծն Շեքսպիրը գրել էր, «Թիմոն Աթենացի» միզանտրոպիան, որտեղ հարուստ Թիմոնը առատաձեռն է ու բարի, կարեկցող ու լիասիրտ, քանի դեռ մարդիկ չեն ամբաստանել իրեն, չեն սնանկացրել նրանք, ում օգնություն էր ցուցաբերել և ում պատճառով դարձավ չարամիտ: Աթենքը վիրավորում է նրան, մեղադրում, և նա նույնպես հեռանում է, իսկ մահից հետո՝ անշնորհակալ Աթենքը պատժվում է: Ինչպես Իսահակյանը, Շեքսպիրը նույնպես այս պիեսը գրելիս չափազանց ծանր հոգեվիճակում էր, անհաջողությունների մեջ:

Նիցցեի գերմարդը ծայրահեղ եսակենտրոն, կյանքն իր ամենածայրահեղ դրսևորումներով փառաբանող էակ է, բայց նաև արարիչ է, ով իր հզոր կամքով գծում է պատմական ուղին:

Այսպիսինն է Իսահակյանի Մահարին՝ ամեն ինչ ժխտելով՝ հաստատել, արարել նոր աշխարհ՝ դեպի Արև «շուքր բյուրաբյուր»:

Ինչպես տեսանք երկու դեպքում էլ մերժումը դառնում է հաստատում:

Իսահակյանը հասել է հրաշալի աշխարհի փառաբանմանը.

Աշխարհն էլ ասես մի հեքիաթ լինի՝ անակիզբ,

Անվերջ, հրաշք դյուրական....

Մարդիկ պետք է լսեն այս հեքիաթը, ըմբռնեն իմաստը: Ուրեմն՝ որքան մեծ է Աբու-Լալայի ատելությունը աշխարհի կարգերի դեմ, նույնքան անչափելի է սերն ու հիացումը այդ վսեմ հեքիաթով:

Ի վերջո հաղթում են մայրացող Արևն ու արևացող Մայրը, և բանաստեղծը վերադառնում է աշխարհահիացման մեծ փիլիսոփայությանը:

4. Դանիել Վարուժանը արևմտահայ գրականության անվիճելի հանճարներից է, ում համար. «Մայր ըլլալ և բանաստեղծ ըլլալ միևնույն բանն է՝ երկունքն ալ արյունելով կը բաժնվին և կ'անմահանան ուրիշ էակներու մեջ»: Իր՝ բանաստեղծի պոեզիան էլ ստեղծվել է արյունով ու երկունքով և դարձել մեր գրականության շողշողուն էջերից մեկը:

XX դարակազմին աշխարհն ապրում էր արյան ու հարստության ծարավով, սպանում ու լլկում էին առանց խղճի, առանց ցավի. Պատերազմներ, հայկա կան ջարդեր, անարդար օրենքներ՝ սրանք էին կյանքի տերերը: Եվ Վարուժանը արձագանքում է դարաշրջանի հակամարտություններին, այրող հարցերին: Ոսկու տենդը իր կրնկի տակ տրորում է մարդուն, «ոսկի են ցանում՝ անբարոյականությունն հնձելու համար»: Բանաստեղծն արդեն զգացել էր «ցեղին սրտի» արյունոտ բաբախը, պայքարի կոչ էր արել և հիմա ցավագնորեն զգում է գեղեցկությունների ոչնչացումը, երես է թեքում արատավոր կյանքից: 1912-ին Վարուժանը լույս ընծայեց իր «Հեթանոս երգեր» ժողովածուն, որը բաղկացած էր «Հեթանոս երգեր» և «Գողգոթայի ծաղիկներ» բաժիններից: Այստեղ Վարուժանը թափանցում է դարաշրջանի հակասությունների մեջ: Նա իր այս հատորի գաղափարական մեկնակետը ժամանակակից իրականության բարքերի քննադատությունն է դարձնում:

«Հեթանոս երգերը» պետք է «մարդ էակին գիրքը լինի», - այսպես է բնութագրել Վարուժանը իր նոր ժաղավածուն: «Մարդն է ինկած գարշա պարին տակ հրակա խոլ աստծու մը հրեա»:

«Հեթանոս երգերի» բնաբանն է՝ «Դարերու կյանքը կ'երգեմ, հանուն հաճույքի և տառապանքի գեղեցկության»:

Հաճույքի շեշտը հեթանոս դարերում փառաբանվող ուժի, գեղեցկության, ոգու, վայելքի մեծարումն է՝ ի դեմս դիցաբանական բազիլների:

Վարուժանը վճռական դեր էր հատկացնում Կանացիության սկզբին («Հարճը») հատկապես վայելքին ու գեղեցկությանը, մարմնեղբայրանն ու մերկությանը:

Փա՛ռք քեզի միշտ, ո՛վ դարեր ասպետական կենցաղին

Ուր մարդիկ հզոր և անկեղծ էին նման գինիին:

Ի դեմս հեթանոսության՝ Վարուժանը ի նկատի ունի Գեղեցկության և Զորության պաշտամունքը՝ հակառակ քրիստոնեական խեղճության, թշվառության, ծախու սիրո ,վշտի ,ցավի և տանջանքների՝ կյանքի և մահվան հակադրությանը:

Այստեղ երևում է նաև տառապանքի շեշտը՝ քերթողահոր կողմից մեզ հասած վիպերգը խմբագրելով սիրո ողբերգական կործանման ուղղությամբ՝ «Գինու նման անկեղծ և հզոր»:

Իսկ «Գողգոթայի ծաղիկներ» շարքի մասին, Վարուժանը գրում է . «Պիտի սկսեմ պատրաստել Գողգոթայի ծաղիկներու շարքը՝ ուր միայն ճշգրիտ կյանքը պիտի վերլուծեմ և երգեմ »: Այս շարքի համար հեղինակը բնաբան է ընտրել Ռենանից «Գեղեցիկ բաները արցունքի մեջ կը ծնանին»:

Շարքը սկսվում է ցավով, անհամար վշտերի, դառնակսկիծ ապրումների հրաշալի նկարագրությամբ: Մոայլ իրականությունը, անհուսալի առօրյան, բանաստեղծին շրջապատող միջավայրը համատարած խավարով են պատում նրան, և նա երգում է զանգվածների երազանքները, ձգտում է հույսի հավերժական աղբյուրներին . «Միրտս սափորն է դատարկ, ու ես կերթամ դեպի աղբյուրը լույսին»:

Պատկերելով բանվորության ծանր կյանքն ու աշխատանքը («Բանվորու հին», «Սպասում», «Մեռնող բանվոր»)՝ միաժամանակ արտահայտում է գալիքի հույսերը. Բանվորական հզոր բանակները պիտի գրոհեն գոռոզ քաղաքների վրա, վառեն «ջահեր բարբարոս», աշխարհը դարձնեն գեղեցիկ և «Արժանի Արևի շուրջը դառնալուն»:

«Նավասարդյան» բանաստեղծությունը թեև դուրս է «Հեթանոս երգեր» շարքից, բայց լիարժեք կարող է ծառայել որպես բնաբան ամբողջ ժողովա ծուխի համար, քանզի բանաստեղծը իր «Հայկյան հանճարը» Նավասարդյան տոներին է նվիրել՝ երգելու ուժը, գեղեցկությունը, սերը, սերմը: Նա հորդոքում է փառագոչ քնարը ծառայեցնել կյանքի վայելքը երգելուն:

Վարուժանի բաղձանքն էր . «...Ապագայի մարդերուն նվիրել այնպիսի հզոր երգ մը, որ հայրենիքը ինձի պես արարած մը ծնած ըլլալուն գոնե չգոջա», իսկ հայրենիքը ոչ միայն չի գոջում , այլև հպարտանալով հպարտանում է այս հզոր հանճարի սլացքով, որտեղ ինքն էլ իր երազած երգի նման հավերժորեն երգվելու է՝ սերունդներին տանելով դեպի ցավի, հաճույքի, տառապանքի, ուժի, սերի, գեղեցկության, հացի, արտի, խաղաղության ճամփաներով ու մենք էլ «խմբագրելով» Մեծին ասենք՝

Չորս ծագերում աշխարհի,

Օրհներգություն թող ըլլա,

Ու երբ կարդա մանուկն այս գիրքը մաքուր

Վարուժաներգություն թող ըլլա.....

**Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշարերի
գնահատման չափանիշներ**

XI դասարան

1. 1-ին հարց՝ 1 ենթահարց՝ 1 միավոր, 2-3-րդը՝ 2-ական միավոր
2. հարց՝ 1-ին ենթահարց՝ 2մ., 2-րդը՝ 1միավոր, 3-րդը՝ 2-միավոր
3. հարց՝ 1-ին ենթահարց՝ 1միավոր, 2-րդը՝ 2-միավոր, 3-6-րդը՝ 0,5-ական միավոր
4. 1 -ին ենթահարց՝ 1միավոր, 2-րդը՝ 1-միավոր, 3-4-րդը՝ 1,5 -ական միավոր